Հավելված
Սահմանված է Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2022 թվականի մայիսի ---ի N----Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են էներգետիկայի բնագավառում և ջրային ոլորտում կարգավորվող անձանց (այսուհետ՝ կարգավորվող անձ) գործունեության մոնիթորինգի (այսուհետ՝ մոնիթորինգ) տեսակները և դրանց իրականացման կարգը:
2. Մոնիթորինգն իրականացվում է կարգավորվող անձանց գործունեությունը «Էներգետիկայի մասին» օրենքին կամ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) իրավական ակտերին, լիցենզիայի պայմաններին համապատասխանության ստուգման, հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության, ինչպես նաև սակագների վրա ազդեցություն ունեցող գործոնների գնահատման համար (ծախսեր, ներդրումներ, գնումներ, սպառման ծավալներ և այլն):
3. Մոնիթորինգի ընթացքում կարգավորվող անձի և հանձնաժողովի փոխհարաբերությունները կարգավորվում են «Էներգետիկայի մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքներով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, սույն կարգով և հանձնաժողովի այլ իրավական ակտերով:
4. Կարգավորվող անձանց գործունեության մոնիթորինգն իրականացվում է՝
   1) հանձնաժողովում՝ կարգավորվող անձի կողմից ներկայացվող հաշվետվությունների և այլ տեղեկատվության ուսումնասիրության միջոցով.

2) կարգավորվող անձի տարածքում՝ կարգավորվող անձի գտնվելու կամ գործունեության վայրում (ներառյալ՝ սպառողների տարածքում)՝ կարճաժամկետ (մինչև հինգ աշխատանքային օր) կամ երկարաժամկետ (վեցից մինչև հիսուն աշխատանքային օր): Կարգավորվող անձի տարածքում հերթական երկարաժամկետ մոնիթորինգը կարող է իրականացվել ոչ շուտ, քան նախորդ երկարաժամկետ մոնիթորինգի ավարտի օրվանից մեկ տարի հետո:

5. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին մասում նշված մոնիթորինգը ներքին ընթացակարգ է և իրականացվում է հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ու տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:
6. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ մասում նշված մոնիթորինգն իրականացվում է հանձնաժողովի նախագահի՝ կարգավորվող անձի տարածքում մոնիթորինգ իրականացնելու մասին հրամանի (այսուհետ՝ հրաման) հիման վրա, որում նշվում են հանձնաժողովի անվանումը, կարգավորվող անձի անվանումը, մոնիթորինգի առարկան, նպատակը, ժամանակահատվածը, իրականացման եղանակը և վայրը, մոնիթորինգի ընթացքում ընտրանք կատարելու դեպքում կիրառվող ընտրանքի մեթոդները (դրանց համակցությունը), մոնիթորինգի արդյունքների կիրառման շրջանակը, մոնիթորինգ իրականացնող անձի (անձանց) անունը, ազգանունը և պաշտոնը:
7. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ մասում նշված մոնիթորինգը ներառում է՝
   1) մոնիթորինգի իրականացման ձևաչափի քննարկում կարգավորվող անձի հետ.
   2) այցելություն հրամանում նշված տարածք.
   3) անհրաժեշտ փաստաթղթերի, նյութերի և այլ տեղեկությունների ստացում և (կամ) համապատասխան շենքերի, շինությունների, ենթակառուցվածքների ու սարքավորումների ակնադիտական զննություն.
   4) ստացված տվյալների որակական ու քանակական վերլուծություն և մոնիթորինգի գործընթացի փաստաթղթավորում:
8. Բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝ կարգավորվող անձի տարածքում մոնիթորինգի իրականացումից առնվազն երեք

աշխատանքային օր առաջ հանձնաժողովն այդ մասին տեղեկացնում է վերջինիս՝ հայտնելով մոնիթորինգի առարկան, նպատակը, ժամանակահատվածը և իրականացման վայրը:

9. Առանձին դեպքերում, անհրաժեշտությունից ելնելով, կարգավորվող անձի տարածքում մոնիթորինգը՝ վերջինիս համաձայնությամբ, կարող է սկսվել սույն կարգի 8-րդ կետով սահմանված ժամկետից ավելի շուտ: Կարգավորվող անձի կողմից ակնհայտ խախտում կատարելու վերաբերյալ ողջամիտ կասկած առաջանալու դեպքում նրա տարածքում մոնիթորինգը կարող է իրականացվել անհապաղ և առանց նրան տեղեկացնելու:

10. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ մասում նշված մոնիթորինգի ընթացքում ընտրանքը կարող է կատարվել պատահական, համակարգված, կամայական, շղթայական, դրամական միավորի և ըստ օգտագործման ծավալի (քանակի) մեթոդներով կամ այդ մեթոդների որոշակի համակցությամբ:

11. Պատահական ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում համակարգչային ծրագրերի միջոցով ուսումնասիրության շրջանակից պատահականորեն ընտրվում են որոշակի քանակությամբ տարրեր:

12. Համակարգված ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում ուսումնասիրության շրջանակից ընտրվում են իրարից նախապես որոշված միջակայքերում գտնվող տարրեր:

13. Կամայական ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում ուսումնասիրության շրջանակից կամայականորեն ընտրվում են համակցության տարրեր:

14. Շղթայական ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում ուսումնասիրության շրջանակից ընտրվում է կամայական գործարք, ուսումնասիրվում են վերջինիս հետ կապակցված փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկությունները:

15. Դրամական միավորի ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում ուսումնասիրության շրջանակից ընտրվում են դրամական արտահայտությամբ համեմատաբար մեծ արժեք ունեցող տարրեր:

16. Ըստ օգտագործման ծավալի (քանակի)՝ ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում ուսումնասիրության տիրույթից ընտրվում են որոշակի ծավալային (քանակական) շեմից ավելի կամ պակաս տարրեր:
17. Մոնիթորինգի ընթացքում կարող են կատարվել լուսանկարահանում, տեսագրում և ձայնագրում: Անհրաժեշտության դեպքում մոնիթորինգի իրականացմանը կարող են ներգրավվել փորձագետներ և այլ մասնագետներ:
18. Կարգավորվող անձն իրավունք ունի ծանոթանալ մոնիթորինգին վերաբերող փաստաթղթերին, մոնիթորինգի ընթացքում դրան մասնակից դարձնել փորձագետների, այլ մասնագետների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկել մոնիթորինգ իրականացնող անձի գործողությունները:
19. Կարգավորվող անձը պարտավոր է մոնիթորինգ իրականացնող անձի պահանջով տրամադրել մոնիթորինգի առարկային առնչվող փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկությունները, տալ պարզաբանումներ, չխոչընդոտել մոնիթորինգի իրականացման ընթացքին և ստեղծել անհրաժեշտ պայմաններ մոնիթորինգ իրականացնող անձի (անձանց) գործունեության համար:
20. Մոնիթորինգ իրականացնող անձն իրավունք ունի անարգել մուտք գործել հրամանում նշված տարածք, պահանջել և ստանալ մոնիթորինգի առարկային առնչվող փաստաթղթեր, նյութեր, այլ տեղեկություններ, պարզաբանումներ և էլեկտրոնային շտեմարանների տեղեկատվությանը հասանելիություն:
21. Մոնիթորինգ իրականացնող անձը պարտավոր է մոնիթորինգի ընթացքում պահպանել օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, կարգավորվող անձի պաշտոնատար անձանց ծանոթացնել մոնիթորինգին առնչվող իրենց իրավունքներին և պարտականություններին, անաչառ և համակողմանի հավաքագրել ու արձանագրել մոնիթորինգի առարկային առնչվող փաստաթղթերը, նյութերը, այլ տեղեկությունները և չխոչընդոտել կարգավորվող անձի բնականոն աշխատանքը:
22. Մոնիթորինգի արդյունքներով, հրամանում նշված ժամկետի ավարտից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է արձանագրություն

(այսուհետ՝ մոնիթորինգի արձանագրություն) և ուղարկվում կարգավորվող անձին:

23. Մոնիթորինգի արձանագրությունը ներառում է՝

1) հանձնաժողովի անվանումը.

2) մոնիթորինգի ենթարկված կարգավորվող անձի անվանումը.

3) մոնիթորինգն իրականացնելու վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը կամ ժամանակահատվածը.

4) մոնիթորինգի առարկան.

5) մոնիթորինգի արդյունքները.

6) մոնիթորինգն իրականացնող անձի (անձանց) անունը, ազգանունը և պաշտոնը.

7) արձանագրության կազմման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, մոնիթորինգ իրականացրած անձի (անձանց) ստորագրությունը:

24. Մոնիթորինգի շրջանակում ստացված լուսանկարները, տեսագրությունները, ձայնագրությունները և այլ փաստաթղթերը կցվում են մոնիթորինգի արձանագրությանը:

25. Մոնիթորինգի արձանագրությունը ստանալու օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, կարգավորվող անձը իրավունք ունի ներկայացնելու առարկություններ կամ առաջարկություններ: